ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Զորակ, 0236 6 38 55, zorakhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 19

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 հոդվածի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Զորակ համայնքի ավագանու 21.12.2020թ-ի արտահերթ նիստի օրակարգը

1. Զորակ համայնքի 2021թ տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին

2. Զորակ համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

4. Զորակի համայնքապետարանի և Մանուկների աշխարհ մանկապարտեզի աշխատակիցների,թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին

5. Քրաուն Քեմիքալ Սպը-ի հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին

Կողմ -3 Դեմ -0 Չեղնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎՈՎԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՈՒԿ ՄԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնք
22, Արարատի մարզ, գ.Զորակ, 0236 6 38 55, zorakhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 20-Ն

ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ ենթակետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

2020թ վարչական բյուջեի ծախսային մասում կատարել տնտեսագիտական և գործառնական դասակարգման հետևյալ փոփոխությունները
1. ա/ 11.1.2 պահուստային ֆոնդ նախահաշվի
4891 հոդվածից պակասեցնել - 700 , 0 հ/դրամ
բ/ 10.7.1 - սոց. արտոնություններ նախահաշվի
4726- հուղարկավորման նպաստ հոդվածից պակասեցնել - 100,0 հ/դրամ
գ/ 01.1.1 - Օրենսդիր և գործադիր մարմինների նախահաշվի
4111 - աշխատավարձ հոդվածից պակասեցնել - 310.0 հ/դրամ
2. 01.01.1 օրենսդիր գործադիր մարմին նախահաշվի
4112 - պարգևատրում հոդվածին ավելացնել -1001,0 հ/դրամ
բ/ 08.2.3 - մշակույթ և կուլտուրայի տուն նախահաշվի
4111 - աշխատավարձ հոդվածին ավելացնել - 16,0 հ/դրամ
4112- պարգևատրում հոդվածին ավելացնել 93.0 հ/ դրամ

Կողմ -3 Դեմ -0 Չեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎՈՎԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՈՒԿ ՄԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Զորակ, 0236 6 38 55, zorakhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 21

ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 64-րդ կետի,հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության համայնքային քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքների համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 04.12.2020թ թիվ 153 դրական եզրակացության և Անի Դավուդիի դիմումը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Անի Դավուդիի գյուղատնտեսական նշանակության /ծածկագիր 03-044-0110-0063 և 03-044-0039-0002/ 4.73133/ արոտավայր/ և 0.16937 հա / այլ հողատեսքի/ նպատակային նշանակությունը փոփոխել և դասել արդյունաբերության, ընդերօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերի դասին:

Կողմ -3 Դեմ -0 Չեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎՈՎԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՈՒԿ ՄԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնք
22, Արարատի մարզ, գ.Զորակ, 0236 6 38 55, zqrakhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 22-Ն

2021 թ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՇԱՓԸ ,ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ «ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ » ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ,ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >>Հայաստան Հանրապետության օրենքի 18 հոդվածի 11 ,26 և 28 կետերի պահանջներով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Զորակ համայնքի ղեկավարի վարձատրությանչափը և համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, «Մանուկներիաշխարհ» մանկապարտեզի թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը համաձայն N1; N2 ;N3 հավելվածների:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎՈՎԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՈՒԿ ՄԱԼՈՅԱՆ

Հավելված N1
Հաստատված է
Զորակ համայնքի
ավագանու 18.12.2020թ
N2 որոշմամբ

ԶՈՐԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2021Թ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 09

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային Դրույքաչափը /ՀՀ դրամ/
Համայնքի ղեկավար		300.000 դրամ
ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ	ՊԱՇՏՈՆՆԵՐ	
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	180.000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ	ՊԱՇՏՈՆՆԵՐ
Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	240.000
Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	220.000
Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/	1	190.000
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ	ԱՇԽԱՏՈՂՆԵՐ	
Հարկահավաք	1	99.000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Հավաքարար	1	96.000
Պահակ	1	96.000
Գործավար	1	138.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԼՈՅԱՆ

Հավելված N2
Հաստատված է
Զորակ համայնքի
ավագանու 18.12.2020թ
N 22 Ն որոշմամբ

ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ԱԿՈՒՄԲԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2021Թ

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային 1 հաստիքի դրույքաչափը /ՀՀ դրամ/
Գրադարանավար	1	130.000
Մշակույթի տան տնօրեն	1	99.000
Անասնաբույժ	0,5	100.000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՄԱԼՈՅԱՆ

Հավելված N3
Հաստատված է
Զորակ համայնքի
Ավագանու 18.12.2020թ
N 24 որոշմամբ

ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ>>ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020Թ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ 15

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային 1 հաստիքի դրույքաչափը /ՀՀ դրամ/
Մանկապարտեզի տնօրեն	1 հաստիք	170 000
Հաշվապահ	0,5 հաստիք	140 000
Տնտեսվար	1 հաստիք	93 000
Դաստիարակ	3,36 հաստիք	125 000
Դաստիարակի օգնական	3 հաստիք	110 000
Երաժշտության դաստիարակ	0,75 հաստիք	125 000
Խոհարար	1 հաստիք	135 000
Խոհարարի օգնական,լվացարար	0,75 հաստիք	115 000
Բուժքույր	1 հաստիք	93 000
Դռնապան,պահակ	1 հաստիք	93 000
Շավաքարար	0,5 հաստիք	93 000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՄԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Զորակ, 0236 6 38 55, zorakhamaynq@mail.ru

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

18ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 23-Ն որոշումից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ ; 11-րդ;12-րդ;14-րդ հոդվածների պահանջներով, ավագանին որոշում է՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Զորակ համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ -7500 դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 15.000 դրամ.
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 25.000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 30.000 դրամ
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 50.000 դրամ.

գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների տեղադրման համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 1500 դրամ.
- 20 ի ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ - 2500 դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր՝մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ - 1500 դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ,ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

…յքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված …րմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի …րծառնական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ,ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար՝ - 2500 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ - 100.000 դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ - 30.000 դրամ.

6) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ - 3250 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ - 6000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ - 7500 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ - 10.500 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ - 3000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ - 5500 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ -7500 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.500 դրամ,

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համայնքի վարչական տարածքում«Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ -175 դրամ մեկ քառակուսի մետրի համար.

9) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ - 25.000 դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ - 50.000 դրամ.
գ. բաղնիքների /սաունաների/ համար՝ - 200.000 դրամ.
դ. խաղատների համար՝ - 500.000 դրամ.
ե. շահումով խաղերի համար՝ - 250.000 դրամ.
զ. վիճակախաղերի համար՝ - 75.000 դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 2500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 5000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 7500 դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 500 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 1000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ - 2000 դրամ,

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում

[illegible]տաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և սիջպետական ու [illegible]անրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ - 1000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ - 1750 դրամ;

գ. սոցիալական գովազդի համար՝ - 0 դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ - 750 դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ - 188 դրամ,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 75 դրամ:

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները / անվանում և այլն/, որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ -50.000 դրամ:

13) Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ - 5000 դրամ.

2. Սույն որոշմամբ սահմանված դրույքաչափերին կիրառվել է 0.5 գործակիցը:

3. Հայաստանի Հանրապետության Ջորակ համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ - 5000 դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների /այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը/ կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար,համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ - 10.000 դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ -5000 դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ - 3000դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ - 3000 դրամ.

6) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝

ա. փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար- 80 դրամ.

բ. առևտրի, այդ թվում՝ շուկաների, հանրային սննդի և բնակչության ապասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ 1 քմ- 20 դրամ.

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ - 6 դրամ.

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և այլ շինությունների մասով՝ 1 քմ - 3 դրամ.

7) համայնքային սեփականություն հանդիսացող գույքը / սրահը / օգտագործելու համար մեկ օրվա / մեկ միջոցառում / համար վարձավճար - 20.000 դրամ

8) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճար՝ - 5000 դրամ.

Դաշտավան համայնքի բնակիչների ծնողական վճար 15 000 դրամ

Այլ համայնքից 11 000 դրամ

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ -1000 դրամ փոխհատուցման վճար:

համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող անունը և գնացուցակը՝

ա. Կենդանիների հիվանդությունների բուժման , կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 դրամ,

բ. ծննդօգնություն՝ թելն միջամտության դեպքում 1000 դրամ , ծանր միջամտության դեպքում 5000 դրամ,

գ. վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների մունական խարդելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում բացառությամբ՝ << Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների մանր եղջերավոր անասունների համար 100 դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 200 դրամ .

դ.կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝200 դրամ.

ե. ախտահանության 1 քառակուսի մետրի համար 200 դրամ

զ. միջատազերծում (դեզինսեկցիա)՝1քառակուսի մետրի համար՝100 դրամ

է. կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)՝1 քառակուսի մետրի համար՝200 դրամ,

ը. Արհեստական սերմնավորման համար՝5000 դրամ,

թ. կենդանու հերձում մանր եղջերավոր անասունների համար ՝1000 դրամ , խոշոր եղջերավորներ անասունների համար՝3000 դրամ ,

ժ. Կենդանու բուժում յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ,

ի. Կենդանիների նախասպանդային զննում մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ

լ. Կենդանիների հետ ապանդային զննում մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ>>:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎՈՎԱ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄՈ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՈՒԿ ՄԱԼՈՅԱՆ